ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2/2

«10» մարտի 2022 թվականի գ. Տեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏԸ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է՝

Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Բաղդագյուլյանը

ՆԻՍՏԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ՝

Տեղ համայնքի ավագանու թվով 13 (տասներեք) անդամներ՝

1. Ղուլունց Դավիթ Արամայիսի
2. Միրզոյան Արամ Գագիկի
3. Բաղդասարյան Նազիկ Մարատի
4. Ղուկասյան Արագած Արշավիրի
5. Միքայելյան Աննա Միքայելի
6. Սիմոնյան Լորա Ռաֆիկի
7. Դալլաքյան Արման Յուրիկի
8. Առաքելյան Վահե Վարդանի
9. Կարապետյան Արշակ Արամի
10. Մարտիրոսյան Գևորգ Շիրազի
11. Բաղդասարյան Կարեն Լորիկի
12. Հայրապետյան Հայրապետ Նորայրի
13. Զեյնալյան Մասիս Արամայիսի

Բացակայում է Տեղ համայնքի ավագանու թվով 2 (երկու) անդամներ՝ Արգամ Հովսեփյանը և Ասպետ Գալստյանը, որոնց գրանցման արդյունքների վերաբերյալ հայտարարությամբ հանդես եկավ Տեղի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Բաղդագյուլյանը, ով միաժամանակ հայտարարեց, որ նիստին մասնակցում են ավագանու **թվով 13 (տասներեք)** անդամները:

ՆԻՍՏԻՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՆ՝

Քարաշենի վարչական ղեկավար Հակոբ Հակոբյանը, Կոռնիձորի վարչական ղեկավար Լուսինե Քարամյանը, աշխատակազմի աշխատակիցներ և համայնքի բնակիչներ:

ԼՍԵՑԻՆ.

1. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 10-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 64-րդ հոդվածներով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 10-ի 2-րդ նստաշրջանի 2-րդ նիստի օրակարգը.

1. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2021թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին,**
2. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2021 թվականի տարեկան աշխատանքային պլանի հաշվետվությունը հաստատելու մասին,**
3. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 17-ի N 44-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,**
4. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 27-ի N 43-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,**
5. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին,**
6. **Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական երկրորդ նստաշրջանի երրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին:**

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 13 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

2. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությանը, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2021 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝
   1) Եկամուտների գծով՝ 254319,213 հազ. դրամ
   2) Ծախսերի գծով՝ 233695,109 հազ. դրամ

2. Հաստատել բյուջեի տարեկան հաշվետվությունները համաձայն հետևյալ հավելվածների.

1) Համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ առանձին եկամտատեսակների՝ հավելված 1,
2) Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ գործառնական դասակարգման՝ հավելված 2,
3) Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ հավելված 3,
4) Համայնքի բյուջեի հավելուրդի կամ դեֆիցիտի՝ /պակասուրդի/ կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ հավելված 4,
5) Համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրների կամ հավելուրդի օգտագործման ուղղությունների կատարման վերաբերյալ հաշվետվությունը՝ հավելված 5:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 13 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

3. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետով և 82.1-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի 2021թվականի տարեկան աշխատանքային պլանի հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 12 դեմ – 0 ձեռնպահ – 1
ձեռնպահ է քվեարկել Հայրապետ Հայրապետյանը:
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

4. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ և ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ և ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 44-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավարի վարձատրությունը՝ պաշտոնային դրույքաչափը սահմանել ամսական 290000 ՀՀ դրամ:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 17-ի N 44-Ա որոշումը:
4. Առաջարկել Տեղ համայնքի ղեկավարին՝ Տեղի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու առաջարկությամբ սահմանված կարգով դիմել ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմին:
5. Հաստիքացուցակի համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխան փոփոխությունները ուժի մեջ են մտնում ՀՀ կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 13 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

5. **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 43-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Տեղ համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 43-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն, N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022թվականի մարտի 15-ից:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 13 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկուցող՝ Դ. Ղուլունց)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N408 որոշումը, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին **որոշում է.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 13 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

ԼՍԵՑԻՆ.

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետով՝ համայնքի ավագանին **որոշում է.**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տեղ համայնքի ավագանու հերթական երկրորդ նստաշրջանի երրորդ նիստի գումարման օր սահմանել 2022 թվականի ապրիլի 14-ը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ
կողմ – 13 դեմ – 0 ձեռնպահ – 0
Որոշումն ընդունվեց

Օրակարգի բոլոր հարցերն սպառվեցին: Նիստն ավարտվեց ժամը 14.50-ին:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

_____Դավիթ Ղուլունց
_____Արամ Միրզոյան
_____Նազիկ Բաղդասարյան
_____Արագած Ղուկասյան
_____Աննա Միքայելյան
_____Լորա Սիմոնյան
_____Արման Դալլաքյան
_____Վահե Առաքելյան
_____Արշակ Կարապետյան
_____Գևորգ Մարտիրոսյան
_____Կարեն Բաղդասարյան
_____Հայրապետ Հայրապետյան
_____Մասիս Զեյնալյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՂՈՒԼՈՒՆՑ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ **ԱՐՏԱԿ ԲԱՂԴԱԳՅՈՒԼՅԱՆ**